ՊԱՐՍԿԱՀԱՅՔ·

ՉԻՒԱՐՉԱՆ—ԱՐՏԱՂ ԳԻՒԱՂԻ ՍՈՒՐԲ ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԼՈՅ ՎԱՆՔԸ.

(Շարունակութիւն·)*

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՀԻՆ ՏԱՃԱՐԻ·

1-«Այս տաճար լուսակիր եւ երկնանման առ-
կայացել հաստատ
2-«ագոյն հիմամբք ի վերայ աստուածարնակ
շիրմի սուրբ առաքելոյս
3-«Թադէոսի որ ըստ բազմատեսակ յանցանաց
մեր զկործանումն էառ
4-«Ի շարժէ. Իսկ ես նուաստ սպասաւոր մին
Զաքարիայ եպ· որդի պ
5-«արոն Մանվէլայ կարողութեամբն Աստու-
ծոյ սկիզբն արարի կրկին նորոգ-
6-«ութեան առաւել քան զառաջինն ի ժամա-
նակի սաստ
7-«իկ նեղութեան եւ հալածանաց Քրիստոնէից
որ եւ բազ
8-«ում եկեղեցիք քակին վասն որոյ արձա-
նագրեցաք զ
9-«յիշատակս մեր առ ի յիշատակել զմեզ
առաջի
10-«մեծին Աստուծոյն եւ անարիւն զենման գա-
ոին Աստուծոյ հանդ
11-«երձ ծնողաց եւ զարմիւք եւ զաջորդն մեր
աղբ
12-«աւր որդին զտէր Տիրացուն այլ եւ զհարազա
13-«տ եղբարս մեր զՊետրոս եւ զՍարգիս որք
ըստ կարու
14-«թեան նպաստաւորք եղեն ընչիւք կատա-
րումն
15-«Թվ· 2ՀԸ.» (=1329)·

Տեղեկութիւնք· Արձանագրութիւնս գտնուում է հիւսիսային որմի վերայ, լուսամուտի տակ· բազկացած է տասն եւ հինգ տողից՝ խոշոր երկաթագիր· տեղ տեղ փակագիր· կրճատ պատուագիր· Բռնած տարածութիւնն է՝ 2 արշ· 13 վերշ·×2 արշ· 8 վերշ· Տողերի երկարութիւնը՝ 2 արշ· 13 վերշ· տառեր 5×10 տմ

«Շնորհիւն Աստուծոյ եւ կարողութեամբ նորին
«կանգնեցաւ գեղեցկայարմար եւ գ
«եղեցկափայլ խաչակալս ի յաջորդու
«թեան ժամանակի Գէորգ վարդապետին արդ
որք նուն
«որք հանդիպիք տուք զողորմին եղև
«կատար շինար նորին ի մերս թուոջ
«ՌՄԽԲ ին (=1793)·

* Տես Արարատ 1898 յունուար:—Նոյն վանքի մի համառոտ նկարագիր յառաջ ի բերել պատսար Տիրէր Der Christliche Orient բերի 1897թ· նոյեմբեր ի··ում: Խմբ·

Տեղեկութիւնք· գտնուում է սեղանի քարեայ խաչկալի վերայ· խորհրդանոցի մուտքի ձախակողմին· խաչկալի պատուանդանի քանդակները սքանչելի են· Ասիտակ խաս մարմարիոնի նման քարից շինուած կաթուղիկէն երկու մուտք ունի· կողքերի սիւնակները քանդակներով զարդարուն· Բեմ—քարի դէմի կաթողիկէն փլած է եւ միայն նեցուկ սիւներն են կանգուն·

Սեղանի խաչկալի մուտքի դռները ներկայացնում են՝ կատաւի վերայ նկարած· աջ կողմում՝ Սուրբ Թադէոս Առաքելոյ կենդանագիրը· մի երիտասարդ· Գեղարդը ձախ եւ դաշոյնը աջ ձեռին· գաստառակն էլ մատների ծայրով բռնած· իսկ ձախ կողմում՝ Սուրբ Բարդուղիմէոս՝ ալէխառն Աստուածամոր պատկերը ձեռքին·

Գրութիւնն է՝

Սուրբ Թադեոսի «Ցիշատակ է Սիմէոնի արքեպիսկոպոսի եւ յաջորդ·

Սուրբ Բարդուղիմեոսի «Սրբոյ տաճարիս սրբազան առաքելոյն Թադէոսի·

Թվ· ՌՄԿԵ· (=1816)·

Պատկերի բարձրութիւնը՝ 1 սաժէն 2 վերշ· լայնութիւնը 1 արշ· 5 վերշ·

Բեմ—քարի վերայի պատկերը ներկայացնում է Աստուածածինը Յիսուս գրկած· թագաւորական· մի զոյգ հրեշտակներ թագը բռնած գլխին· թագի վերան էլ Հօր Աստուծոյ պատկերը· Աստուածածինն աթոռի վերայ նստած է՝ աջակողմը Ս· Թադէոս· Գեղարդը եւ գաստառակը ձեռին· իսկ ձախ կողմում Ս· Բարդուղիմէոսը՝ Աստուածամոր պատկերը բռնած եւ կանգնած· բաւականին մաքուր եւ գեղեցիկ· եւ իւր ժամանակի համար գեղարուեստական մի գործ կարելի է համարել այս պատկերը·

Մեծութիւնը՝ բարձրութեան 2 արշ· 6· վերշ· լայնութեան· 1· արշ· 13 վերշ·

Պատկերի վերայի գրութիւնն է·

«Թուին Փրկչի ՌՊԺԱ (1811) և առաջնոր-
«դութեամբ Սուրբ ուխտիս տեառն Սիմէոն արքե-
«պիսկոպոսին տէր Բրդն· Խչ· Տր· Նկչ· Այս
«սուրբ պատկերս ի վանս սրբոյ առաքելոյն Թա-
«դէոսի մաքուր շիրմի Կարնեցի Քոսեանց մահ-
«տեսի Ցարութիւնէ յիշատակ վասն իւր վասն
«կենակցոյն մահտեսի Խանումին և որդւոյն մահ-
«տեսի Յակոբին մահտեսի Սիմէոնին և տիրացու
«Գէորգին և այլ ամենայն կենդան·»

Նօտրագիր եւ բոլորը մի տողի մէջ·

Սեղանում պահուած խաչվառը· ինչպէս արձանագրութիւնից երեւում է· վանքի նոր տաճարի շինող սոյն երջանկայիշատակ Սիմէոն արքեպիսկոպոսն է նկարել իւր ձեռքով եւ յիշատակել տանս·

Խաչվառի առաջին երեսի գիրն է՝

«Ի Նորոգման սրբոյ Աթոռոյս Նկարեցաւ խաչ-
«վառս ձեռամբ Սիմէոն Սրբազան արքեպիսկոպոսի
«ետ յիշատակ Նորակերտ սրբոյ տաճարիս»·

Երկրորդ երեսի գրութիւնը·

«Ցիշատակ է Սրբազան Առաքելոյն Թադէոսի
«Աթոռոյն առաջնորդ Սիմէոն Արքեպիսկոպոսիս
ծնողացս· քերցս ··· եղծ···

Մեծութիւն խաչվառիս 1 արշ· 8 վերշ·× 1 արշ· 2 վ·

Հարաւային խորանի միջի մարմարեայ տապանաքարերի արձանագրութիւնը.

Առաջին՝

«Այս է տապան տեառն մեծի
«Զաքարիաս վարդապետի
«Սուրբ Աթոռոյս սա բա.....ի
«Որ յաջորդեց Թ տարի
«Էր սա երկրաւ Ղափանեցի
«Հայր էր սա անարժանիս
ՌՃՂԲ. (=1743).

Երկրորդ՝

«Տապանս սայ է Եղկելի
«Մինաս անուն վարդապետի
«Որ յաջորդեց տանս մեծի
«Ներզբաղմանց ժամանակի
«Ծառայ էր սա տեառն մեծի
«Զաքարիաս վարդապետի:
ՌՄ. (=1751).

Մարմարիոնի մեծութիւնն է՝ երկարութիւն. 1 արշ. 9 վերշ. լայնութիւն 11 վերշ. հաստ. 3 վերշ.

Հին կաթուղիկէի հիւսիս արեւմտեան կամարասեան որմի ծեփի վրայի գրութիւնը.

Ես Վանեցի
Ջրպաշ Թու
մենց լուսա
հոգի մահտեսի
Գասեպարի որդի
Փիրիջանս եկի.

Կից սորան.

«Ես Վանեցի Ջրպաշ Թումենց
լուսահոգի մահտեսի Գաս
պարի որդի մահտեսի
Փիրիջանս եկի սուրբ
առաքելոյդ Թադէոսի
գերեզմանն համբու
րեցի ով որ հանդ
պի զայս գիրս կարդայ
հայր մեղայիւ յիշեսցէ.»

Կից սորան.

«Ես Վանեցի Գասպարի
որդի Ախիճանս
յեկի սուրբ ուխտս
տվի. ՌՄԻԵ ապրելի
ԻԸ. 1255.» (=1776).

Նոյն որմի վերայ վերոյիշեալ գրութեանց տակ բոլորագրով.

«Ես Արապկերցի մեղա
պարտ գրիչ Ղուկաս
Դըպիրըս գրեցի հայ
Թվին ՌՄԼԴ ին (=1785):

Կից սորան.

«Ի ուխտ եւ յերկրպա
գութիւն սրբոյ աթոռ
ոյս եկի ես Վանցի
մահտեսի, Գասպարի որդի
Մահտեսի Փիրիջանս
Ի ՌՄԾԵ 1255
մայիս ԺԵ.» (=1806).

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՆՈՐ ՏԱՃԱՐԻ.

«Ցիշատակէ սունս վերանրգիչ սրբոյ
Աթոռոյս առաջնորդ Սիմէօն
Արքեպիսկոպոսի Էջմիածնեցոյ
եւ ծնողաց նորին Մու
բատին եւ Գայեանին.
Թվին ՌՄԾԹ» (=1810).

Տեղեկութիւն. Արձանագրութիւնս քանդակուած է հիւսիս-արեւելեայ որման կից սիւնի արեւմտեան ճակատին, սպիտակ քարի վերայ. եւ հաղցրած կապոյտ քարերի մէջ. Մեծութիւն 8×12 վերշ. 6 տողից. կէս երկաթագիր եւ պատուագիր.

«Ցիշատակէ սունս սրբոյ
Աթոռոյս առաջնորդ Սիմէօն
Արքեպիսկոպոսի Էջմիածնեցոյ
եղբօր Խաչատրին եւ քեռն
.....ին եւ ամենայն զարմիցն
Թվ. ՌՄԾԹ-ին (=1810).

Հար. արեւել. որմասեան արեւելեան ճակատին. Մեծութիւնը 13×9 վերշ. 6 տող.

«Այլ և յիշատակ է Բայազեդցի մահտեսի Ափրիկի որդի
մահտեսի Բարսեղին եւ Պետրոսինն եւ ծնողացն Շահզատին մահտեսի Լալէի
որդի Աւետիսին եւ մահտեսի Բարսեղի
կողակցի Մարթային.
ՌՄԿԳ. (=1814).

Աւազանի զարդերի ներքեւ. տողի երկարութիւնն է 1 արշ. 2 վերշ. գրութիւնը 4 տողից.

«Ցիշատակ է սուրբ ավազանս Բայազեդցի
մահտեսի Գօրօի
որդի մահտեսի Մընացականին ՌՄԿԴ-ին
յուլիս Է. (=1815).

Աւազանի քարի վերայ. երկու տող. 1 արշ. 5 վերշ. երկարութեամբ.

«Սուրբ խաչս բա
րեխօս Էլօին
եւ կնոջն Շամա
մին եւ որդուն
Պետրոսին»:

Աւազանից բարձր. որմի մէջ՝ դէպի արեւելք. իսկ դէպի արեւմուտք՝

«Ցիշատակ է աւազանս Սեդու
կեցի հանգուցեալ մահտեսի
Գերոմի որդիսն մահտեսի»,
Ցիսուս Քրիստոս.

«Ղորդանէցի Դաւիթ
կաթուղիկոսի եղբայր Մէլի
քեան Բարսեղին Երէվան
ցո. եւ կողակցոյն յիւրոյ եւ
«որդոցն Զօհրաբին Ռուստամ
«ին եւ Մկռտչին եւ տրստերա
«ցն եւ հանգուցեալ ծընող
«ացն եւ հայոյն կենդանեաց
եւ նընջեցելոցն ամէն»
Թվին ՌՄԿԲ. (=1813).

Տեղեկություն. գտնուում է հիւս. արեւել. սեան արեւմտեան երեսին. քանդակազարդ. մատուցարանաձեւ. եզերքը նկարէն, քանդակները ներկած կարմիր գոյնով. մեծութիւն. 1 արշ. 2 վերշ.×1 արշ. անկիւններում գրած է.

Ծր. Ա՛ծ. Ցո՛. Քս.
«Յիշատակ է Սիւնս Մէլիք Ներ
«սեսի որդի մլիք Նավասարդ մլիք
«Մօսէս մլիք Բալասան մլիք Ստե
»փան եւ մլիք Աղաջան երեքին
«եղբարք Նորոգեցաք վասն հոգոց
«նախնեաց մերոց արծերու
«նի Սենեքերիմ Դաւիթ Բե
«կեան. Թվին ՌԿԻՆ ?(=1611)? (Թերևս ՌՄԿ=1811).

Տեղեկություն. Գտնուում է հար. արեւել. սեան արեւմտեան երեսին մեծութիւնն է 9×11 վերշ. 3 տողից գրութիւն.

Սոյն սեան տակի պատուանդանի կոտրած հանգըստարանի խոշոր երկաթագիր դիրն է.

«Կ. դամբար. անանուն կոչի»

Ինչպէս երեւում է խորանի մարմարեայ եւ սեան տակերի շիրիմ քարերից. հանգուցեալ Սիմէօն արքեպիսկոպոսը բաւականին տապանաքարեր է անհետացրել նոր տաճարի շինութեան ժամանակ որման հիմերի եւ սեան տակերի շինութեանց մէջ.

«Հոգածութեամբ յառաջնորդ Սիմէօն արք-
եպիսկոպոսի
«եւ պատրիարգութեան սուրբ Սաղիմայ Թէո-
դորոս եպիսկոպոսին
«յիշատակ է Սիւնս սուրբ Սաղիմայ իմդագչի
«եւ նվիրակ տեառն Ստեփան վրդպտին եւ ծնո-
«ղացն մահտեսի Մելքոնին Հռիփսիմին
»եւ եղբրցն մահտեսի Սարգսին եւ տիրացու
«Ցարութիւնին եւ յակոբին եւ ամեն
«այն զարմից Նորին Թվ. ՌՄԿԳ (=1815).

Տեղեկություն. Գտնուում է հիւսիս-արեւմտեան սեան արեւմտեան ճակատին. մեծութիւնը 9 ×15 վերշ. 3 տող.

Սոյն արձանագրութիւնը ցարդ փորագրած չէ այլ միայն մատիտով գրած է փորագրութեան համար.

«Ոգածութեամբ յաջորդ Սի
«մէօն բազմաշխատ եպիսկոպոսին
«յիշատակ է սիւնս Մարդեցի
«տէր Խաչատուրին եւ կողկ
«ցուն. նա եւ Ղարաբախեցի
«տէր Պետրոսին եւ կողկցուն նա
«եւ Զլաղաւ Պարոն Աստուածատուր
«ին եւ կողակցուն ՌՄ.....եղծ.

Տեղեկություն. Գտնուում է հար. արեւմտեան սեան արեւմտեան երեսին մեծութիւն 10'/,×9'/, վերշ. 3 տող գրութեամբ.

Սոյն սեան պատուանդանի տապանաքարի դիրը.

«Թվ. Զխէ այս է հանգիստ ....

Մնացեալը կոտրած է եւ սեան տակ մնացած.

(Շարունակելի)

Յ. Վ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ՔԸՂՈՒՐԹՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀՐՈՓԻ ՀՐՑՐԲՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Տ. Աշոտ վարդապետի Շախեան, որով կարգի Նախագահ Տպարանական Ժողովոյ Մ. Աթոռոյ, թ. 14։

—Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի ինոյն միտս, թ. 15։

—Յանուն Յովհաննէս քահանայի Մարտիրոսեանց, միաբանի Քամոյեանց եկեղեցւոյ, որով շնորհի նմա Կամիլաւակա, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Թեմակալին Տփղեաց, թ. 22։

—Յանուն Գրիգորիս քահանայի Մատինեանց, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան նորին Թեմակալի. թ. 23։

—Յանուն Գէորգ քահանայի Մկրտումեան, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան Գեր. Տ. Թեմակալի վիճ. Աստրախանի, թ. 25։

—Յանուն Կարապետ քահանայի Վլասեան, որով շնորհի նմա լանջախաչ քահանայական, ըստ միջնորդութեան նորին Թեմակալի։

—Յանուն վիճ. Կոնսիստորիայի Շամախւոյ, որով կարգի Տ. Սահակ վարդապետն Տ. Միքայէլեան անդամ նոյն Կոնսիստորիայի, թ. 73։

—Յանուն Ամեն. պատրիարքին Կ. Պոլսոյ Տ. Մաղաքիայ Արքեպիսկոպոսի, որով լուծեալ ճանաչի պսակ Նինայի Պուպլի Զմիւռնիացւոյ ընդ այր իւր՝ բժիշկ Մանուկ Արա-